Հաստատում եմ՝
«Աբովյանի պետական
էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝
_______________ Գ.Մեհրաբյան

«25» _______________ 2023թ.

# «ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԳ

2023 թ.

«ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԳ

# 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

Սույն քաղաքականությունը կիրառվում է քոլեջի հետազոտական և կրթական ոլորտների վրա և ուղղված է դրանց փոխկապակցման գործընթացի իրականացմանը:

# 2. ՍՈՒՅՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝

1. Սույն քաղաքականության նպատակն է ստեղծել ամուր հիմքեր քոլեջի հետազոտական և կրթական գործունեության փոխկապակցման և ինտեգրման համար՝ ապահովելով տվյալ գործընթացների միասնությունը և շահակից կողմերի ներգրավվածությունը:
2. Հետազոտական գործունեության և ուսումնառության հետ կապի ապահովում:
3. Ուսումնառողների շրջանում հետազոտական ու ստեղծագործական միջավայրի ապահովում ու զարգացում:
4. Ուսումնական և հետազոտական գործընթացների շաղկապման միջոցով նոր գիտելիքների ստացման մեխանիզմների, մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում վերջինիս կիրառելիության և ներդրման ապահովումն է:
5. Ուսումնառողների մոտ սեփական հետազոտությունների արդյունքների ներկայացման կարողության (անհատական ախատանքների, հաշվետվությունների, ռեֆերատների, պրեզենտացիաների պատրաստում և այլն) զարգացումն է:

# 3. ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

3.1. կրթական ծրագրերում ներդրնել հետազոտական բաղադրիչ և նպաստել դրա կայացմանը; երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործունության պլանավորմամբ հետազոտությունների իրականացման և զարգացման ապահովում;

3.2. կրթական և հետազոտական գործընթացների արդյունավետ փոխկապակցվածության ապահովում;դասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավումը հետազոտական, գործնական և մեթոդական աշխատանքներում:

3.3. ապահովել հանրության և գիտական աշխարհի իրազեկումը քոլեջի հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ;

3.4. հետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովում:

## 4. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է.

4.1.1.մշակել և պլանավորել առաջիկա 5 տարիների համար (երկարաժամկետ) քոլեջում իրականացվելիք հետազոտությունների ուղղությունները և այդ ոլորտներում իր հետաքրքրությունները՝ ըստ ցիկլների կողմից ներկայացրած ծրագրերի;

4.1.2. հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրությունների և հավակնությունների երկարաժամկետ ռազմավարության հիման վրա մշակել և ներդնել հետազոտությունների միջնաժամկետ (3 տարվա համար) և կարճաժամկետ (1-2 տարվա համար) կոնկրետ ծրագրեր և հստակ մեխանիզմներ ՝ ներգրավելով հետազոտական աշխատանքներում նաև ուսանողներին;

4.1.3. տեղական և համագործակից կառույցների հետ մշակել համատեղ հետազոտական ծրագրեր, ակտիվացնել կիրառական բնույթի հետազոտությունների իրականացումը;

4.2.1. մշակել և ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության քաղաքականություն, ընթացակարգեր և մեթոդներ;

4.2.2. իրականացնել որակավորման բարձրացման դասընթացներ;

4.2.3. ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջքոլեջային հետազոտական կոնֆերանսներին, սեմինարներին;

4.2.4. ԱՊԵՔ-ում իրականացվող հետազոտությունների շնորհիվ ապահովել դասախոսների մասնակցությունը ՊԿՉ-ների վերանայման, կազմման և մշակման գործընթացին;

4.3.1. մշակել և ներդնել մեխանիզմներ,որոնց միջոցով դասախոսական կազմը կիրազեկվի քոլեջին վերաբերվող հետազոտական նախագծերի մասին

4.3.2.մշակել և ներդնել հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ;

4.3.3. մշակել հստակ մեխանիզմներ հետազոտությունների իրականացման բարենպաստ պայմաններ ստեղծելու համար;

4.3.4. բարելավել աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը;

4.3.5. խրախուսել հետազոտական աշխատանքների միջոցով նոր գիտելիքների ձևավորումը և ուսուցման գործընթացում դրանց կիրառումը,կարևորելով քոլեջի համար հիմնարար հանդիսացող էներգետիկական ուղղությունները;

4.4.1. իրականացնել քոլեջի հետազոտական աշխատանքների առաջնահերթությունների հիման վրա բյուջեի միջոցների համապատասխան հատկացումներ

4.4.2. ապահովել համապատասխան նյութատեխնիկական բազա՝ դուրս գալով հետազոտական աշխատանքների առաջնահերթություններից: